ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 05/18

08.06.2018թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը **(այսուհետ՝ Կենտրոն)**,

քննարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Քաղաքացիներ Արմինե Աթոյանը, Հայկ Նազինյանը և Արկադի Վարդանյանը (ներկայացուցիչ՝ Ս. Սողոմոնյան) դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ մասը:

Դիմողները գտնում են, որ վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածով ամրագրված իրավունքին այնքանով, որքանով զրկում է անձանց իրենց սեփականությունն իրենց կամքով տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքից:

Ըստ դիմողների՝ վիճարկվող իրավակարգավորման համաձայն վարկային պայմանագրով կարող են սահմանվել պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման համար այնպիսի տույժեր, որոնք խախտում են պայմանագրի մյուս կողմի իրավունքները և օրինական շահերը՝ անբարենպաստ հետևանքներ առաջացնելով նրա համար:

Դիմողների կարծիքով՝ վիճելի իրավակարգավորման առկայությամբ պայմանավորված՝ պայմանագրի մի կողմը կարող է մյուս կողմի համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում գործարք կնքել՝ սահմանելով ծայրահեղ պայմաններ:

Ելնելով վերոգրյալից՝ Դիմողը ՀՀ սահմանադրական դատարանից խնդրել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածին հակասող և անվավեր:

Սույն գործով ՀՀ սահմանադրական դատարանում գործի քննությունը նշանակված է 2018թ. հունիսի 12-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սույն գործով վիճարկվող քաղաքացիաիրավական դրույթի բովանդակությունը հետևյալն է.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի (Վարկային պայմանագիր) 2-րդ մասի համաձայն՝

2. Վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 46 գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 46-րդ գլուխը, որի վրա հղում է կատարում վիճարկվող դրույթը, վերնագրված է **«Փոխառություն»** վերտառությամբ և կարգավորում է փոխառության պայմանագրի հետ կապված հարաբերությունները: Ընդ որում, ըստ վիճարկվող դրույթի՝ *փոխառության հարաբերությունները կարգավորող դրույթները կիրառելի են վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ այնքանով, որքանով այլ բան նախատեսված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 47-րդ գլխով նախատեսված վարկային պայմանագրին վերաբերող դրույթներով և վարկային պայմանագրով*:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրը 3-րդ և 437-րդ հոդվածներում սահմանում է պայմանագրի ազատության սկզբունքը: Համաձայն նշված սկզբունքի՝ *Քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդված, 2-րդ կետ):*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի համաձայն՝ *1. Քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս:..*

2. Կողմերը կարող են կնքել ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր:

…

4. Պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով (հոդված 438):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին):

Այսպիսով, վիճարկվող դրույթի տրամաբանությունն ամբողջությամբ համահունչ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված պայմանագրի ազատության սկզբունքի հետ: Այն վարկային պայմանագրի կողմերի համար սահմանում է վարկային պայմանագրի պայմանների որոշման ազատություն այնքանով, որքանով այդ պայմանները չեն հակասում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 46-րդ և 47-րդ գլուխներում նախատեսված իմպերատիվ բնույթի քաղաքացիա-իրավական դրույթներին:

Ակհայտ է, որ վիճարկվող դրույթը, ինչպես նաև սույն գործի հանգամանքներով դատարանի կողմից իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը որևէ կերպ չի առնչվում անձի սեփականության իրավունքին, առավել ևս՝ կապված չէ այդ իրավունքից զրկման կամ սահմանափակման հետ: Պարզ ասած՝ ***վիճարկվող դրույթը սահմանում է վարկային պայմանագրի՝ օրենքին չհակասող պայմանները որոշելու կողմերի ազատությունը և ինքնին չի միջամտում անձի՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածով երաշխավորված իր սեփականությունն ազատ կամքով տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու հայեցողությանը:*** Եթե քննարկվող գործի շրջանակներում դիմումատուների կարծիքով որևէ կերպ սահմանափակվել է անձի սեփականության հիմնական սահմանադրական իրավունքը, ապա, այնուամենայնիվ, այդ սահմանափակումը որևէ ձևով պայմանավորված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությամբ, որը սույն գործով դատարանի կողմից կիրառված և անհատական դիմումով վիճարկվող դրույթն է:

Ավելին, դիմողի պնդումն այն մասին, որ կողմերի միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագիրը չի համապատասխանում քաղաքացիական օրենսգրքի և այլ իրավական ակտերի պահանջներին, սահմանադրական դատարանի քննությանը ենթակա հարց չէ, այլ գտնվում է ընդհանուր իրավասության դատարանի իրավազորության տիրույթում: Այս իմաստով ևս անհատական սահմանադրական դիմումը հիմնավոր չէ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդածի համաձայն՝

1. Սույն հոդվածում նշված գործերով դիմում (այսուհետ՝ անհատական դիմում) կարող է ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական

իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

…

5. Անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, <u>երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է,</u> կամ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները, կամ լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը:

Նույն օրենքի 29-րդ հոդվածի (Գործի քննությունը մերժելը) համաձայն `

1. Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝

<u>1) եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին.</u>

2) եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան.

3) եթե Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-5-րդ կետերում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է Սահմանադրական դատարանի որոշում.

4) եթե դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում իրականացվում է գործի դատաքննություն.

5) եթե վիճարկվող իրավական ակտի կամ դրույթի գործողությունը դադարել է, և այն չի կիրառվել կամ ենթակա չէ կիրառման.

6) սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում:

Նույն օրենքի 60-րդ հոդվածի (Գործի վարույթը կարճելը) համաձայն՝

1. Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝

1) գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր.:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

Սույն գործի վարույթը սահանադրական դատարանում ենթակա է կարճման՝ ակնհայտ անհիմն լինելու և ՀՀ սահմանադրական դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքերով:

Համակարգող՝ Լյուդվիկ Դավթյան